

Ինֆորմացիայի  
ազատության  
կենտրոն

**2012**

Տարեկան  
հաշվետվություն

## Բովանդակություն

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մասին.....	3
2012թ.-ին իրականացված ծրագրեր.....	5
Գործողություններ.....	8
Ուսուցումներ և վերապատրաստումներ.....	8
Պետական մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակման մեխանիզմների բարելավում .....	9
Ռազմավարական դատական գործեր.....	10
Հանրային քարոզարշավ.....	18
Խորհրդատվություն քաղաքացիներին.....	20
ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ.....	21
Միջոցառումներ.....	23

**Ի**նֆորմացիայի ազատության կենտրոնը հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2001թ.-ի հունիսի 1-ին Երևանում մի խումբ լրագրողների և իրավաբանների կողմից: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնական առաքելությունն է պաշտպանել քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը:

## ԻԱԿ-ի հիմնական նպատակներն են

- Նպաստել բաց և թափանցիկ կառավարման համակարգի ձևավորմանը և քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:
- Նպաստել տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենսդրության կիրառմանը:

## ԻԱԿ-ի գործունեության ուղղություններն են

### ■ Իրավական խորհրդատվություն և դատական պաշտպանություն

ԻԱԿ-ը քաղաքացիներին, ՁԼՄ-ներին, ՀԿ-ներին, լրագրողներին և իրավաբանական անձանց իրավական խորհրդատվություն է տրամադրում տեղեկատվություն ստանալու իրավունքի վերաբերյալ՝ միաժամանակ օգնելով բողոքարկել տեղեկատվություն ստանալու հարցումների անօրինական մերժումները՝ ներառյալ դատարական կարգով: 2001-2012թթ. ընթացքում կենտրոնը իրավական խորհրդատվություն և աջակցություն է տրամադրել 6850 անձի: 2006-2012թթ ընթացքում ԻԱԿ-ը տեղեկատվության տրամադրումն ապօրինի մերժած պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ 37 (ավարտված և դեռևս ընթացքի մեջ գտնվող) դատական գործ է հարուցվել՝ 80% դրական արդյունքով, ինչի շնորհիվ վերականգնվել է տեղեկատվություն ստանալու խախտված իրավունքը:

### ■ Ուսուցումներ

ԻԱԿ-ը ՀՀ ողջ տարածքում ուսուցումների միջոցով օգնում է քաղաքացիներին, ՀԿ, ՁԼՄ և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև պետական պաշտոնյաներին զարգացնել իրենց գիտելիքը և հմտությունները Տեղեկատվության ազատության ոլորտում: 2003-2012թթ ընթացքում 6650 մարդ? այդ թվում 2763 պաշտոնյա, ստացել է գիտելիք և հմտություն տեղեկատվության ազատության օրենսդրության վերաբերյալ:

### ■ Հանրային քարոզարշավ

2001թ.ից մինչ օրս Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է հանրային լայն քարոզարշավ տեղեկատվության ազատության խնդիրներին հանրությանն իրազեկելու նպատակով: Կենտրոնը իրապարակում է «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը, որը ՏԱ ոլորտի մասին միակ մասնագիտացված պարբերականն է Հայաստանում: Տեղեկագրի յուրաքանչյուր համարում իրապարակվում է այն պաշտոնյաների «Սև ցուցակը», որոնք ոտնահարել են քաղաքացիների, լրագրողների, հասարակական կազմակերպությունների և իրավաբանական անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքը: 2011թ.-ից Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր տարեկան Սև ցուցակին զուգահեռ իրապարակում է նաև տարեկան Սպիտակ ցու-

ցակ: Բոլոր այն գերատեսչությունները, որոնք եռամսյակային Սև ցուցակներում հայտնվելուց հետո վերանայում են տեղեկատվության ազատության ոլորտում իրենց գործունեությունը և բարեփոխումներ կիրականացնում տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով, այլևս չեն ընդգրկվում տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների տարեկան ամփոփ Սև ցուցակում: Այդ գերատեսչություններն ու նրանց ղեկավարներն ընդգրկվում են ԻԱԿ-ի ամենամյա Սպիտակ ցուցակում: ԻԱԿ-ը ՁԼՄ-ներով լայնորեն հրապարակայնացնում է տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները:

#### ■ **Օրենսդրական բարեփոխումներ**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ակտիվ դերակատարում է ունեցել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մշակման և ընդունման գործում: Ներկայումս ԻԱԿ-ը նախաձեռնել է ՏԱ օրենսդրության բարեփոխումների երկրորդ սերնդի մշակման և ընդունման գործընթացը: Բարեփոխումների փաթեթը մշակվել է ՀՀ Արդարադատության նախարարության, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի և քաղաքացիական հասարակության հետ համատեղ: Ներկայումս մշակված ՏԱ օրենսդրական փաթեթն ընդգրկված է ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի քառօրյա օրակարգում:

#### ■ **Բարեփոխումներ էլեկտրոնային կառավարման ոլորտում**

ԻԱԿ-ն իրականացնում է մի շարք ծրագրեր կառավարման համակարգում էլեկտրոնային կառավարման նոր մեխանիզմներ ներդնելու, կատարելագործելու և դրանց հրապարակայնության ապահովմանն ու մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի իրականացմանն ուղղելու նպատակով:

#### ■ **ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ**

ԻԱԿ-ն իրականացնում է ՏԱ մասին ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկայի մշտական դիտարկում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարեկան շուրջ 500 տեղեկություն ստանալու հարցումներ է ուղարկում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ այսպիսով լինելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ամենաակտիվ օգտագործող կազմակերպություններից մեկը:

2012թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հասարակական կազմակերպությունն իրականացրել է 5 ծրագիր՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության, ԱՄՆ դեսպանատան և ՄԱԿ-ի փախստականների գլխավոր հանձնակատարի Երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

## 1 Տեխնիկական աջակցություն Տեղեկատվական վեճերի խորհրդին

Ծրագիրն իրականացվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ: Ծրագրի տևողությունը 8 ամիս էր (ապրիլ - նոյեմբեր 2012 թ.):

Տեղեկատվական վեճերի խորհուրդը (ՏՎԽ) ստեղծվել է 2011թ.-ի մայիսին՝ հաշվի առնելով զանգվածային լրատվության միջոցների դեմ դատական գործերի բացասական պրակտիկան: ՏՎԽ-ի առաքելությունն է պաշտպանել խոսքի ազատությունը, բարելավել տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև պաշտպանել մարդու արժանապատվությունը և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ դատական վեճի առկայության դեպքում հրապարակելով եզրակացություններ, որոնք հիմնված են ՀՀ Սահմանադրության, միջազգային իրավական ակտերի և էթիկայի նորմերի վրա:

ՏՎԽ-ն 5 հիմնադիր անդամ ունի, ովքեր ներկայացնում են մարդու իրավունքների, ՁԼՄ-ների և լրագրողական էթիկայի ոլորտները:

### Ծրագրի նպատակն էր.

Ամրապնդել Տեղեկատվական վեճերի խորհրդի (ՏՎԽ) տեխնիկական կարողությունները՝ ընդլայնելով դրա արդյունավետությունը որպես արտադատական մարմին լրատվամիջոցների հետ կապված վեճերի այլընտրանքային լուծում ներկայացնելու հարցում:

### Ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ գործողությունները.

- Վիրավորանքի և զրպարտության հետ կապված 30 դատական գործերի վերաբերյալ եզրակացությունների պատրաստում և հրապարակում:
- Աշխատանքային երկու քննարկման կազմակերպում՝ լրագրողների և իրավաբանների մասնակցությամբ՝ ներառյալ նրանց, ովքեր ներգրավված են խոսքի ազատության վերաբերյալ դատական գործերում:

## 2 Փաստաբանների, դատավորների և ՋԼՍ ներկայացուցիչների համար արտահայտվելու ազատության միջազգային չափանիշների իրազեկության խթանում

Ծրագիրն իրականացվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ: Ծրագրի տևողությունը՝ 2 ամիս (հոկտեմբեր - նոյեմբեր 2012 թ.):

Ծրագրի նպատակն էր ամրապնդել ՋԼՍ-ներին վերաբերող վեճերի լուծման արտադատական մեխանիզմները և հասնել ավելի լավ պաշտպանության, ինչպես և խթանել Հայաստանում արտահայտվելու ազատությունը:

### Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Կազմակերպվել է աշխատանքային քննարկում ՀՀ Դատական դեպարտամենտի և ՏՎԽ անդամների մասնակցությամբ,
- կազմվել և հրատարակվել է ՏՎԽ-ի կարծիքների երկլեզու ժողովածու,
- պատրաստվել և գործարկվել է ՏՎԽ-ի կայքը՝ [www.idcarmenia.am](http://www.idcarmenia.am),
- կազմակերպվել է շնորհանդես և հանրությանը ներկայացվել ՏՎԽ-ի կարծիքների ժողովածուն և ՏՎԽ-ի կայքը:

## 3 Թրաֆիքինգի և դրա դեմ պայքարի լուսաբանման ամենամյա մրցանակաբաշխություն-2012

Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ դեսպանատան և ՄԱԿ-ի փախստականների գլխավոր հանձնակատարի Երևանյան գրասենյակի հետ համատեղ: Տևողությունը երկու ամիս էր՝ ապրիլ-մայիս, 2012թ.:

Ծրագրի նպատակն էր խրախուսել թրաֆիքինգի դեմ պայքարի լուսաբանումն ու հանրությանը տեղեկացնել այդ երևույթի, դրա դրսևորումների, ինչպես նաև դրա դեմ իրականացվող պայքարի մասին:

«Հեռուստատեսություն և ռադիո» անվանակարգում առաջին տեղը նվաճել է Արզուման Հարությունյանը՝ «Արմենիա» հեռուստատեսությամբ ցուցադրված սոցիալական հոլովակաշարի համար: Երրորդ տեղը շնորհվել է Սիրանուշ Մուրադյանին՝ «Երկիր մեդիա» հեռուստաընկերությամբ ցուցադրված «Ճորտերը» ռեպորտաժի համար: Այդ անվանակարգում թափուր է մնացել երկրորդ տեղը:

Մասնագիտական ժյուրին մրցանակային տեղեր չի շնորհել «Տպագիր և առցանց լրատվամիջոցներ» անվանակարգում: Փոխարենը ժյուրին որոշել էր դիմել խորհրդին՝ առաջարկելով քննարկել «Հետք» պարբերականին խրախուսական մրցանակ շնորհելու հնարավորությունը՝ տարիների շարունակ թեմային հետևողականորեն անդրադառնալու համար: Խորհուրդն ընդունել է ժյուրիի առաջարկը:

## 4 «Մամուլի ազատություն, տեղեկություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդես

ԻԱԿ-ը ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համատեղ աջակցությամբ 2012թ. մայիսի 3-ին արդեն երկրորդ անգամ կազմակերպեց «Մամուլի ազատություն, տեղեկություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդեսը: Մեկ շաբաթ տևած ցուցահանդեսի նպատակն էր նաև անդրադառնալ տեղեկատվություն ստանալու իրավունքի խոչընդոտներին ու հնարավորություններին, և կառավարությանը, մամուլի ներկայացուցիչներին ու ողջ հասարակությանը հիշեցնել այս իրավունքի իրականացման գործում իրենց դերի մասին:

Ցուցադրված 70 լուսանկարներն ու ծաղրանկարները հրապարակվեցին մամուլի ազատության համաշխարհային օրվան նվիրված հատուկ ֆոտոկատալոգում:

## 5 Տեղեկատվության մատչելիությունը համայնքային մասնակցության համար

ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է «Տեղեկատվության մատչելիությունը համայնքային մասնակցության համար» 5-ամյա ծրագիրը (2008-2013թ.թ.): Այս ծրագրի հիմնական խնդիրներն են նպաստել մարդկանց մասնակցությանը համայնքային կառավարման և հանրային խնդիրների լուծման գործընթացներին, ինչպես նաև տեղեկատվության մատչելիության արդյունավետությունը բարձրացնելու միջոցով խթանել բաց և թափանցիկ կառավարման համակարգի ձևավորումը:

**Ծրագրով նախատեսված գործողություններն են.**

- Տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք տալու էլեկտրոնային մեխանիզմների ներդրում 3 մարզպետարաններում և 2 քաղաքներում:
- Տարբեր խմբերի ուսուցում տեղեկատվության ազատության օրենսդրության վերաբերյալ:
- Ռազմավարական դատական գործերի ստեղծում:
- Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ ուսումնական կենտրոնի հիմնադրում:
- Սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակման մեխանիզմների բարելավում:
- Հասարակության ակտիվության բարձրացում:
- Հանրային քարոզարշավ և դատական նախադեպերի ստեղծում:
- Կայունության պլանի մշակում:

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1 Ուսուցումներ և վերապատրաստումներ

**Ի**նֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադրած Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնում 2012թ.-ի ընթացքում վերապատրաստվել է 263 համայնքային ծառայող: Այսպիսով, 2011-2012թ.թ. կենտրոնում վերապատրաստված համայնքային ծառայողների ընդհանուր թիվը կազմում է 400 հոգի: Համայնքային ծառայողները վերապատրաստվել են «Միջանձնային հարաբերությունները, տեղեկատվության ազատությունը և հասարակայնության հետ կապերի ապահովումը տեղական ինքնակառավարման համակարգում» վերապատրաստման ծրագրով, որը 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 129-Ա հրամանով հաստատել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը:

Վերապատրաստումներն եռօրյա էին, որոնց ավարտին մասնակիցներին տրվում էր պետական վկայագրեր: Դասընթացներն իրականացվում են ՀՀ Տարածքային կառավարման նախարարության և ՀՀ Քաղաքացիական ծառայողների միության հետ համատեղ:

Նշենք, որ Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնը հիմնադրվել է 2010 թվականի նոյեմբերի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Տեղեկատվության ազատությունը համայնքային մասնակցության համար» ծրագրի շրջանակում՝ այդպիսով դառնալով պետական պաշտոնյաներին ՏԱ ազատության վերաբերյալ գիտելիքով և հմտություններով ապահովող կայուն ինստիտուցիոնալ մեխանիզմ: Կենտրոնի նպատակն է ուսուցանել քաղաքացիական և համայնքային ծառայողներին տեղեկատվության ազատության իրավունքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայի, տեղեկատվության էլեկտրոնային կառավարման, ինչպես նաև պաշտոնյաների էթիկայի վերաբերյալ:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադրած Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնում 2012թ.-ի ընթացքում վերապատրաստվել է 263 համայնքային ծառայող:



## 2 Պետական մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակման մեխանիզմների բարելավում

### ■ Տեղեկատվական ցուցատախտակներ

2012թ.-ին ԻԱԿ-ը ՀՀ 8 համայնքներում՝ 4 գյուղական (Ելփին, Չիվա, Շինուհայր և Ծովագյուղ) և 4 քաղաքային (Գորիս, Մեծամոր, Էջմիածին և ճամբարակ), տեղադրել է 40 տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինները պետք է հրապարակեն իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկությունը: Այս տեղեկատվական ցուցատախտակները տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները մատչելի դարձնելու ճկուն, ոչ ծախսատար և արդյունավետ միջոց են:

Տեղեկատվական ցուցատախտակների վրա փակցվող տեղեկատվությունը բաղկացած է երկու մասից՝ փոփոխվող և անփոփոխ: Անփոփոխ մասում ներկայացված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիմնական դրույթները, տեղեկություններ, թե ինչպես կարող է քաղաքացին իրականացնել իր՝ տեղեկություն ստանալու իրավունքը, ինչպես նաև տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձև: Ցուցատախտակի փոփոխվող մասում ներկայացվում են այնպիսի անհրաժեշտ տեղեկություններ, ինչպիսին է համայնքի բյուջեն, բյուջեի կատարման հաշվետվությունը, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների պատճենները, համայնքի ավագանու նիստերի վերաբերյալ տեղեկատվություն և այլն:

Այս գործընթացի շրջանակներում ԻԱԿ նախագահի և թիրախ 8 համայնքների ղեկավարների միջև կնքվել է հուշագիր, որով համայնքի ղեկավարները պարտավորվել են պարբերաբար (ամսվազն ամիսը մեկ անգամ) թարմացնել ցուցատախտակներում հրապարակվող տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովել համայնքի բնակիչների տեղեկացվածությունը ցուցատախտակների մասին: Համայնքի ղեկավարները պարտավորվել են ապահովել ցուցատախտակների օգտագործումը բացառապես հանրային նպատակներով, այսինքն, պետք է իսպառ բացառվի գովազդի տեղադրումը դրանց վրա:

Հայաստանի 57 քաղաքային և գյուղական համայնքներում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2007-2012թթ.. տեղադրել է 270 տեղեկատվական ցուցատախտակ՝ ապահովելով այդ համայնքներում հրապարակայնությունն ու տեղեկատվության մատչելիությունը:

### 3 Ռազմավարական դատական գործեր

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործեր այն պաշտոնյաների դեմ, ովքեր խախտում են քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը, անպատասխան են թողնում ՏԱ հարցումներին կամ տրամադրում են ողջ ամբողջական կամ թերի տեղեկատվություն: ՏԱ մասին դատական գործերը դրականորեն են ազդում տեղեկատվության ազատության վիճակի վրա՝ զերծ պահելով պաշտոնյաներին խախտում կատարելուց: Այս գործընթացի շնորհիվ աստիճանաբար ձևավորվում է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական նախադեպային պրակտիկա:

2003թ.-ից մինչ օրս Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ հարուցվել է 37 դատական գործ՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի ոտնահարման վերաբերյալ, որոնցից 31-ն ամբողջությամբ ավարտվել է, 6 գործ դեռևս ընթացքի մեջ է: Ավարտված 31 գործերից 23-ն (74%) ունեցել են դրական ավարտ, 3-ն (10%) ավարտվել են մասնակիորեն դրական և 5 (16%) գործ ունեցել են բացասական ավարտ: Դրական ավարտ ունեցած գործերի դեպքում կամ դատարանն ամբողջությամբ բավարարել է ԻԱԿ-ի հայցը, կամ ԻԱԿ-ը հաշտություն է կնքել պատասխանող կողմի հետ, քանի որ վերջինս դատական գործի ընթացքում ամբողջությամբ տրամադրել է հայցի առարկա դարձած տեղեկությունները: Մասնակիորեն դրական ավարտված են համարվել այն գործերը, որոնց դեպքում դատարանը բավարարել է ԻԱԿ-ի հայցապահանջների մի մասը և մերժել մյուս մասը: Բացասական ավարտ ունեցող են համարվել այն դատական գործերը, որոնց դեպքում դատարանի կայացրած վճռով կամ որոշմամբ մերժվել են ԻԱԿ-ի հայցապահանջները: Բոլոր դատական գործերի մասին տեղեկությունները՝ կից փաստաթղթերով հասանելի են ԻԱԿ-ի կայքում՝ [www.foi.am](http://www.foi.am):

2012թ.-ի ընթացքում ավարտվել է 4 դատական գործ: Դրանք են՝ ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի, ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Արտակարգ Իրավիճակների նախարարության, ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի, ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության:

■ **ԻՎԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի**

Տեղեկատվությունը թաքցնելու համար «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը համառ պայքարեց 3 տարի՝ դատական բողոքարկումների վրա վատնելով պետական ռեսուրսները և ի վերջո պարտվեց: 2012թ.-ի հունվարի 18-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը վերջ դրեց տեղեկատվություն ստանալու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եռամյա պայքարին՝ վերջնականապես մերժելով «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի վճռաբեկ բողոքի ընդունումը:

ԻՎԿ-ը տեղեկություն ստանալու հարցում էր ուղարկել ՊՈԱԿ-ին դեռևս 2009թ.-ի փետրվարի 27-ին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ 2006, 2007, 2008թ.թ.-ին ՊՈԱԿ-ի հետ հանձնարարության և նկարագրության պայմանագիր կնքած կազմակերպությունների ցանկը և այդ պայմանագրերից ՊՈԱԿ-ի ստացած հասույթի չափը: Ի պատասխան՝ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը հայտնել էր, որ ԻՎԿ-ի պահանջած տեղեկությունները համարվում են առևտրային գաղտնիք: Այս պատասխանն անհեթեթ էր, քանի որ ՊՈԱԿ-ը ոչ առևտրային կազմակերպություն է, չի հետապնդում առևտրային շահ, հետևաբար չի կարող ունենալ առևտրային գաղտնիք: Հարկ է նշել, որ պահանջվող տեղեկություններն անգամ՝ ՊՈԱԿ-ի հետ պայմանագիր կնքած կազմակերպությունների մասին, առևտրային շահ չեն կարող համարվել, քանի որ ԻՎԿ-ը խնդրել է ընդհանուր հասույթի վերաբերյալ տեղեկություն՝ այլ ոչ թե յուրաքանչյուր կազմակերպությունից ստացված գումարի չափը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. փետրվարի 27-ին ՊՈԱԿ-ին հարցում էր ուղարկում՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 և 2008թթ.-ին որքա՞ն գումար է կազմել:
2. ՊՈԱԿ-ը 2006, 2007 և 2008թթ.-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության և նկարագրության պայմանագրեր:
3. ՊՈԱԿ-ը 2006, 2007 և 2008թթ.-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության և նկարագրության պայմանագրերից:

Պատասխանում ՊՈԱԿ-ը նշել էր, որ 1-ին կետով ներկայացված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակված է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ և 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առևտրային գաղտնիք, հետևաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել: 2009թ.-ի մարտին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՊՈԱԿ-ի պատասխանը բողոքարկեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով.

1. Ոչ իրավաչափ ճանաչել «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի այն գործողությունները կամ անգործությունը, որով սպառիչ և լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ և պարտավորեցնել «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը:
2. «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ վարչական դատարանը մասամբ վարույթ ընդունեց ԻԱԿ-ի հայցը՝ մերժելով ՊՈԱԿ-ի տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը: ԻԱԿ-ը ՀՀ վարչական դատարանի վճիռը այս մասով բողոքարկեց:

2009թ.-ի դեկտեմբերի 7-ին ՀՀ վարչական դատարանը հրապարակեց ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործով վճիռը, որով մերժեց ԻԱԿ-ի հայցը:

2009թ.-ի դեկտեմբերին ԻԱԿ-ը վճռաբեկության կարգով բողոքարկեց ՀՀ վարչական դատարանի վճիռը: 2010թ.-ի հունիսի 3-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի վճռաբեկ բողոքը: Վճռաբեկ դատարանը բեկանեց ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործով ՀՀ վարչական դատարանի կայացրած վճիռը և գործն ուղարկեց նույն դատարան նոր քննության:

2011թ. հունիսի 20-ին ՀՀ վարչական դատարանը լիովին բավարարեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի: Դատարանը վճռեց ոչ իրավաչափ ճանաչել ՊՈԱԿ-ի գործողությունները, պարտավորեցնել «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրելու ԻԱԿ-ի կողմից 27.02.2009թ.-ի հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը և հօգուտ ԻԱԿ-ի բռնագանձել 24.000 դրամ:

ՊՈԱԿ-ը ՀՀ վարչական դատարանի վճիռը բողոքարկեց վերաքննության կարգով, սակայն 2011թ.-ի նոյեմբերի 8-ին ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը մերժեց ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործով ՊՈԱԿ-ի վերաքննիչ բողոքը:

ՊՈԱԿ-ը վճռաբեկության կարգով բողոքարկեց նաև ՀՀ վերաքննիչ դատարանի մերժումը: 2012թ.-ի հունվարի 18-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժեց նաև ՊՈԱԿ-ի՝ ՀՀ վերաքննիչ դատարանի մերժման դեմ բերված բողոքը, և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի օգտին կայացված? ՀՀ վարչական դատարանի հունիսի 20-ի վճիռը մնաց ուժի մեջ: 2012թ.-ի մարտի 29-ին ՊՈԱԿ-ը Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրեց դատական վեճի առարկա դարձած տեղեկությունները:

## ■ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Արտակարգ Իրավիճակների նախարարության

2011թ.-ի փետրվարի 7-ին ԻԱԿ-ը գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե կա՞ն արդյոք նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնագրերով են 2010թ.-ին, և եթե կան, ապա խնդրել էր տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ԱԻ նախարարությունը հղում էր արել ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը՝ նշելով, որ այդ փաստաթղթերն առգրավվել են ՀՀ ՀԶԾ-ի կողմից: ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը, սակայն, ԻԱԿ-ին տեղեկացրել է, որ առգրավված փաստաթղթերի պատճեններն առկա են ԱԻ նախարարությունում: Այսինքն, տեղեկատվություն տնօրինողը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է: Ուստի 29.03.2011թ.-ին ԻԱԿ-ը կրկին դիմել էր նախարարությանը, սակայն ԱԻ-ը անպատասխան էր թողել գաղտնագրերով փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին ԻԱԿ-ի հարցումը: ԱԻ-ը անպատասխան էր թողել նաև ԻԱԿ-ի՝ 25.05.2011թ.-ի և 20.10.2011թ.-ի հարցումները:

Արդյունքում, ԻԱԿ-ը 2011թ. նոյեմբերի 8-ին դիմել էր դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ԶԶ Արտակարգ իրավիճակների նախարարությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև ԶԶ ԱԻ նախարար Արմեն Երիցյանին ենթարկել վարչական պատասխանատվության 50.000 ԶԶ դրամի չափով:

2012թ.-ի մայիսի 21-ին կայացավ ԻԱԿ-ն ընդդեմ ԶԶ Արտակարգ իրավիճակների նախարարության դատական նախնական նիստը, որի ժամանակ ԱԻ նախարարությունը տրամադրեց ԻԱԿ-ի պահանջած ողջ տեղեկատվությունը՝ 51 էջից բաղկացած, ինչի արդյունքում էլ կնքվեց հաշտության համաձայնություն ԻԱԿ-ի և ԶԶ Արտակարգ իրավիճակների նախարարության միջև:

■ **ԻԱԿ-ն ընդդեմ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի**

2011թ.-ի նոյեմբերի 11-ին «Անկախ» շաբաթաթերթը դիմել էր «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ին՝ խնդրելով տեղեկություններ ՈւՎԿ-ի կողմից ֆինանսավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց և ֆինանսավորման չափերի մասին: Շաբաթաթերթի հարցմանը՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն պատասխանել է մերժմամբ՝ հայտնելով, որ խնդրվող տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք: Նշենք, որ 11.11.2011թ.-ի հարցմամբ խնդրված տեղեկությունները վերաբերել են պետական միջոցներից տրամադրված ֆինանսավորմանը: «Անկախ» շաբաթաթերթը դիմել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնին:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը «Անկախ» շաբաթաթերթին տեղեկություն ստանալու հարցում օգնելու համար 2011թ.-ի նոյեմբերի 22-ին գրավոր հարցում էր կատարել «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Բաղայանին՝ նշելով, որ խնդրվող տեղեկությունները վերաբերում են պետական միջոցներին, և խնդրել տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն, ստեղծման օրվանից մինչև վերջին ամփոփման օրն ընկած ժամանակահատվածում քանի՞ իրավաբանական և ֆիզիկական անձի է ֆինանսավորել «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ-ին տրամադրված պետական միջոցներից,
2. Որո՞նք են այդ իրավաբանական և ֆիզիկական անձիք (խնդրում են նշել ամբողջական անունները),
3. «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ-ին տրամադրված պետական միջոցներից որքա՞ն միջոցներ են հատկացվել յուրաքանչյուր իրավաբանական և ֆիզիկական անձին:

Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ ՈւՎԿ-ն ներկայացրել էր թերի, մասնակի պատասխան: Բացի այդ, ՈւՎԿ-ն հղում էր կատարել առևտրային գաղտնիքին (բանկային գաղտնիք), առանց մանրամասնելու, թե կոնկրետ ԶԶ ո՞ր օրենքի ո՞ր դրույթով է ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը համարվում գաղտնիք:

2011թ.-ի դեկտեմբերի 23-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայց է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանին՝ խնդրելով պարտավորեցնել «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև վարկային կազմակերպության տնօրենին ենթարկել վարչական պատասխանատվության՝ 50.000 ԶԶ դրամի չափով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը վճիռը հրապարակվեց 2012թ. մարտի 15-ին՝ մերժելով ԻԱԿ-ը հայցը: Դատարանը գտավ, որ պահանջվող տեղեկատվությունը առևտրային գաղտնիք է:

## ■ ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի ապրիլի 25-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել Բարգավաճ Հայաստան կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Բարգավաճ Հայաստան կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

ԲՀԿ-ն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: Ուստի, 2012թ.-ի մայիսի 15-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում է ուղարկել Բարգավաճ Հայաստան կուսակցությանը, որը նույնպես մնացել է անպատասխան:

Արդյունքում, 2012թ.-ի հուլիս 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայցով դիմել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ԲՀԿ-ին 5-օրյա ժամկետում տրամադրել ամբողջական տեղեկատվություն:

2012թ.-ի սեպտեմբերի 12-ին նշանակվել էր ԻԱԿ-ն ընդդեմ ԲՀԿ-ի գործով առաջին դատական նիստը: Նշենք, որ մինչև սեպտեմբերի 12-ը՝ 2012թ.-ի սեպտեմբերի 4-ին, ԲՀԿ-ն տրամադրել էր դատական գործի առարկա դարձած ամբողջ տեղեկատվությունը (տես՝ <http://givemeinfo.am/hy/case/941/>): Բացի այդ, սեպտեմբերի 5-ին ԲՀԿ-ն դիմել էր դատարան՝ հայտնելով, որ կատարել է ԻԱԿ-ի պահանջը: ԲՀԿ-ն միջնորդել էր գործի վարույթը կարճելու մասին:

Մինչև դատական նիստը ԻԱԿ-ը դիմում ներկայացրեց դատարան, նշելով, որ չի առարկում գործի վարույթը կարճելու դեմ, պայմանով, որ դատարանը կամ պետք է լուծի պետական տուրքի հարցը, և հոգուտ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՅԿ-ի բռնագանձվի վճարված պետական տուրքը, կամ Բարգավաճ Հայաստան կուսակցությունը պետք է ՅԿ-ին կանավոր փոխանցի վճարված պետական տուրքի գումարը: Նշենք նաև, որ ԻԱԿ-ի ներկայացուցիչ Կարեն Մեծլունյանը սեպտեմբերի 12-ին բացակայում էր երկրից, ուստի սեպտեմբերի 12-ին նշանակված դատական նիստը հետաձգվեց:

Մինչև դատական նոր նիստը ԲՀԿ-ն կանավոր Ինֆորմացիայի ազատության կենտրոնին էր փոխանցել նաև ԻԱԿ-ի վճարած պետական տուրքի գումարը: Ուստի, 2012թ.-ի հոկտեմբերի 2-ին կայացած դատական նիստում դատարանը որոշեց ԻԱԿ-ն ընդդեմ Բարգավաճ Հայաստան կուսակցության դատական գործը կարճել: Դատարանի վճիռը կայացվեց 2012թ.-ի հոկտեմբերի 10-ին:

## Նախադեպային դատական գործեր

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերից մի քանիսն ունեցել են նախադեպային նշանակություն: Այդպիսի գործ էր 2009թ.-ին ավարտված՝ ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետարանի դատական գործը, որի դեպքում առաջին անգամ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյան՝ Ելփինի գյուղապետը, ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50.000 դրամի չափով:

2012թ.-ին նախաձեռնված նման գործեր են ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի Դեմոկրատական կուսակցության դատական գործերը: 2012թ. ընթացքում այս գործերով առաջին անգամ կայացվեցին վճիռներ, որոնցով փոխհատուցվում էին ԻԱԿ-ի կատարած դատական ծախսերը՝ տեղեկատվության ազատությանն առնչվող դատական գործով: Առաջին ատյանի դատարանների այդ վճիռները, սակայն, բողոքարկվեցին վերաքննության կարգով, և այժմ դեռևս ընթացքում են:

### ■ ԻԱԿ-ն ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի մայիսի 29-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարզատրույուններ (պարզավճարներ, նվերներ) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզատրվել (ըստ հաստիքների) և ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած դրամական պարզատրույունների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը և նվերների արժեքների ընդհանուր գումարը:

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ից ստացվել էր թերի պատասխան. չեն տրամադրվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի խնդրած՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՅ-ի՝ պարզատրույուն ստացած աշխատակիցների և դրամական պարզատրույունների չափի մասին տեղեկությունները (2-րդ և 3-րդ հարցերի պատասխանները): Ուստի 20.06.2012թ. ԻԱԿ-ը կրկին հարցում էր ուղարկել՝ խնդրելով տրամադրել ամբողջական և սպառիչ տեղեկատվություն:

ԻԱԿ-ի ուղարկած երկրորդ հարցմանն ի պատասխան 02.07.2012թ. ստացվել էր գրություն, որով տեղեկություն է տրվել նաև հարցման 3-րդ կետում նշված հարցի վերաբերյալ, սակայն, հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին կետին և 199 հոդվածին՝ մերժվել է հարցման 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրումը, այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել էր պարզապես ստացած աշխատակիցների մասին տեղեկություն ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական: Բացի այդ, ԻԱԿ-ը ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդից ստացել էր գրություն, որի համաձայն՝ քաղաքացիական ծառայողների ստացած պարզապես արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ չկան: Այս 2 պայմանների համակցությունը ցույց է տալիս, որ խնդրվող տեղեկությունը չի վերաբերում քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Արդյունքում, 2012թ.-ի հուլիսի 24-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայցերով դիմել է ՀՀ վարչական և Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններ՝ խնդրելով պահանջվող տեղեկությունների տրամադրումը ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն Վ. Մարտիրոսյանի կողմից երկու անգամ մերժելու համար նրան տուգանել 30.000 դրամի չափով, ինչպես և՛ ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին պարտավորեցնել տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ.-ին աշխատակիցները ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարզապես վերաբերում:

2012թ.-ի նոյեմբերի 23-ին դատարանը հրապարակեց իր վճիռը, որով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի պահանջը ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և պարտավորեցնել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին տրամադրելու պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ.-ին աշխատակիցները ըստ հաստիքների ինչքա՞ն գումարով են պարզապես վերաբերում:

Դատական ծախսերի փոխհատուցման, մասնավորապես՝ ԻԱԿ-ի կողմից փաստաբանին վճարված վարձատրության գումարի փոխհատուցման պահանջը դատարանը բավարարեց մասնակի՝ պարտավորեցնելով պատասխանողին փոխհատուցել ԻԱԿ-ի կողմից վճարված պետական տուրքի գումարը և փաստաբանի վարձատրության գումարի կեսը:

2012թ.-ի դեկտեմբերի 12-ին «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը բողոքարկել է դատարանի վճիռը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան:

## ■ ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 25.04.2012թ.-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը 25.04.2012թ.-ի դրությամբ որքա՞ն գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:
2. Ծախսած գումարներից որքա՞ն են կազմում կուսակցության սեփական միջոցները, որքա՞նը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

ՀԴԿ-ն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: Ուստի, 16.05.2012թ.-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում է ուղարկել Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը, որը նույնպես մնացել է անպատասխան:



Արդյունքում, 2012թ.-ի հունիս 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայցով դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀԴԿ-ին 5-օրյա ժամկետում տրամադրել ամբողջական տեղեկատվություն:

**2012թ.-ի դեկտեմբերի 21-ին դատարանը հրապարակեց իր վճիռը, որով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի պահանջը ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և պարտավորեցնել Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը տրամադրելու պահանջվող տեղեկատվությունը:**

Դատական ծախսերի փոխհատուցման, մասնավորապես՝ ԻԱԿ-ի կողմից փաստաբանին վճարված վարձատրության գումարի փոխհատուցման պահանջը դատարանը բավարարեց մասնակի՝ պարտավորեցնելով պատասխանողին փոխհատուցել ԻԱԿ-ի կողմից վճարված պետական տուրքի գումարը և փաստաբանի վարձատրության գումարի մի մասը՝ 100.000 դրամ:

2013թ.-ի հունվարի 21-ին Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը բողոքարկեց Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը ՀՀ վերաքննիչ դատարան:

## 4 Հանրային քարոզարշավ

2001թ.ից մինչ օրս Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է հանրային լայն քարոզարշավ տեղեկատվության ազատության խնդիրներին հանրությանն իրազեկելու նպատակով: 2012թ.-ի ընթացքում այս նպատակով իրականացվել են մի շարք գործողություններ:

### ■ Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխություն 2012

2003թ.-ից ի վեր՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ամեն տարի սեպտեմբերի 28-ին՝ Տեղեկատվության ազատության միջազգային օրը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կազմակերպում է Տեղեկատվության ազատության «Ոսկե բանալի, Ժանգոտ կողպեք» մրցանակաբաշխություն, որի միջոցով խրախուսվում է պետական մարմինների հրապարակային և բաց աշխատանքը, միաժամանակ քննադատվում փակ և գաղտնի գործունեությունը:

2012թ.-ին ՏԱ մրցանակաբաշխությունը 10-րդն էր: Այս մրցանակաբաշխության ժամանակ դրական մրցանակներ՝ Ոսկե բանալիներ են շնորհվել.

- ՀՀ Առողջապահության նախարարությանը՝ որպես 2012թ. ամենահրապարակային գործող մարմին,
- ՀՀ Տարածքային կառավարման նախարարության պաշտոնական ինտերնետային կայքին՝ [www.mta.gov.am](http://www.mta.gov.am) -ին՝ որպես 2012թ. տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք,
- «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ին՝ որպես 2012թ. տեղեկություն ստանալու իրավունքը լավագույնս կիրառած հասարակական կազմակերպություն,
- Լրագրող Աննա Իսրայելյանին՝ ([www.aravot.am](http://www.aravot.am) և Ազատություն ռ/կ)՝ որպես 2012թ. տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենաակտիվ լուսաբանած լրագրող,
- CivilNet ինտերնետային հեռուստատեսությանը՝ որպես 2012թ. տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենաակտիվ լուսաբանած լրատվամիջոց:
- Հատուկ մրցանակ է տրվել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ 2012թ. Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնությանը մասնակցելու համար, ինչպես նաև ԲԿԳ-ում պետության համապարփակ գործողությունների ծրագիրը մշակելու և ներկայացնելու համար:

Այս տարիների ընթացքում առաջին անգամ էր, որ 2012թ. մրցանակաբաշխության ժամանակ ժյուրին չի շնորհել Ժանգոտ կողպեք մրցանակը ամենափակ և գաղտնի պետական մարմնին: Սա դրական ցուցանիշ է և խոսում է մեր և մեր գործընկերների կատարած հետևողական աշխատանքի մասին, ինչպես նաև հրապարակային գործունեության ապահովմանն ուղղված կառավարության գործադրած արդյունավետ ջանքերի մասին:

Նշենք, որ մրցանակակիրներին որոշում է տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, լրագրողներից, ոլորտի փորձագետներից կազմված անկախ ժյուրին: Ժյուրիի անդամներն ամփոփում են իրենց և ԻԿ կենտրոնի մոնիտորինգների արդյունքները, քննարկում են նաև կենտրոնի եռամսյակային Սև ցուցակները, որում ընդգրկվում են տեղեկություն

ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաներն ու գերատեսչությունները: Յուրաքանչյուր անվանակարգի ընտրության չափանիշները տեղադրված են ԻԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքում՝ <http://www.foi.am/am/content/206/>:

## ■ Հրապարակումներ

Տարվա ընթացքում ԻԱԿ-ը հրապարակել է տեղեկատվության ազատության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ և վերլուծություններ: Դրանց մեծ մասը հայերեն և անգլերեն լեզուներով տեղ է գտել նաև կազմակերպության ինտերնետային կայքում՝ [www.foi.am](http://www.foi.am):

2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հրապարակել է նաև.

- **«Հրապարակային ընտրություններ. ինչպես ստանալ տեղեկություն ընտրական գործընթացում» ուղեցույցը՝** ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ: Ուղեցույցի հիմնական նպատակն է լրատվամիջոցների ներկայացուցիչներին, լրագրողներին ծանոթացնել տեղեկատվության ազատության հասկացությանը և նշանակությանը ընտրությունների ժամանակ, ինչպես նրանք կարող են օգտագործել ՏԱ մասին օրենսդրությունը ընտրությունների ընթացքում տեղեկատվություն ստանալու նպատակով: Ուղեցույցի առաջին բաժինը նվիրված է ընտրական տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման պայմաններին. 2-րդ բաժինն անդրադարձնում է տեղեկություն ստանալու իրավունքին:
- **«Ինչպես լուսաբանել իրավական թեմաները» ուղեցույցը՝** ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ: Այն հանգամանորեն անդրադարձնում է քրեական հետապնդում հարուցելու բացառիկ լիազորություն ունեցող ՀՀ դատախազության, ինչպես նաև քրեական գործերով նախաքննություն կատարելու իրավասություն ունեցող մարմինների քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում տեղեկատվության տնօրինման առանձնահատկություններին:
- **Տեղեկատվական վեճերի խորհրդի կարծիքների ժողովածուն՝** ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ: Այս գիրքը օգտակար աղբյուր կարող է ծառայել դատավորների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, փաստաբանների և ոլորտով հետաքրքրվող ու շահագրգիռ այլ անձանց համար: ՏՎԽ-ի կարծիքների ժողովածուն օգտակար կլինի հատկապես լրագրողների համար, ովքեր կարող են կիրառել ՏՎԽ-ի կարծիքներն այն դեպքերում, երբ իրենց հրապարակումները կփորձեն որակել որպես պատիվ և արժանապատվություն ոտնահարող: Օգտագործելով ՏՎԽ-ի կարծիքները՝ լրագրողները կարող են զերծ մնալ տեղեկատվական վեճերի մեջ ներքաշվելուց:
- **«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագրի 4 համար:** Տեղեկագիրը Հայաստանում միակ մասնագիտացված պարբերականն է տեղեկատվության ազատության հիմնախնդիրների վերաբերյալ: Այն լույս է տեսնում 2001թ.ից ի վեր, եռամսյակը մեկ անգամ և ներառում է ինչպես տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ վերլուծություններ և հոդվածներ, այնպես էլ հետաքրքիր և օգտակար տեղեկություններ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնյաների մասին, օրինակ՝ պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների տեղեկանքներ, մարզպետների որոշումներ, մարզպետարանների, համայնքների, Երևանի տարբեր վարչական շրջանների, նախարարությունների տարեկան բյուջեներ և այլն:
- **«Մամուլի ազատություն, տեղեկություն ստանալու իրավունք» ֆոտոկատալոգի** երկրորդ ժողովածուն Կենտրոնը հրապարակեց 2012թ.-ին: Այդ ժողովածուում ներառվել են ԻԱԿ կողմից 2012թ.-ի մայիսի 3-ին կազմակերպված «Մամուլի ազատություն, տեղեկություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդեսին մասնակցած բոլոր 70 լուսանկարները և ծաղրանկարները:

## 5 Խորհրդատվություն քաղաքացիներին

2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը շարունակել է քաղաքացիներին ապահովել տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ խորհրդատվությամբ: 2012թ. ընթացքում կենտրոնն ապահովել է խորհրդատվությամբ 460 քաղաքացու:

Կազմակերպության այս գործունեությունը ներառում է 3 ուղղություն.

- զուտ խորհրդատվություն պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման, ինչպես նաև այլ տեղեկատվություն տնօրինողներից տեղեկություն ստանալու հնարավորության և կարգի վերաբերյալ,
- գործնական աջակցություն քաղաքացիներին հարցումներ կազմելու հարցում: Այն դեպքերում, երբ քաղաքացիների ուղարկած հարցումները մնացել են անպատասխան կամ պատասխանը եղել է ոչ լիարժեք, Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր անունից նույնաբովանդակ հարցում է ուղարկել տվյալ տեղեկատվություն տնօրինողին և քաղաքացու համար ստացել պահանջվող տեղեկությունները,
- դատական գործերի պարտաստում և ներկայացուցչություն դատարանում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հետամուտ է լինում սեփական նախաձեռնությամբ կամ քաղաքացիների համար ուղարկված և անպատասխան մնացած, թերի կամ անհիմն, ոչ ըստ էության պատասխան ստացած հարցումներին՝ փորձելով լրացուցիչ հարցման կամ բանավոր ճշտման միջոցով ստանալ պահանջված տեղեկությունները: Այն դեպքերում, երբ դա չի հաջողվում, ԻԱԿ-ը դիմում է դատարան՝ պահանջված տեղեկությունները ստանալու, ինչպես նաև տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

Խորհրդատվությունն իրականացվել է Ինտերնետի միջոցով, հեռախոսով և քաղաքացիների կողմից ԻԱԿ գրասենյակ այցելությունների միջոցով:

## 6 ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ

ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգն ԻԱԿ-ն իրականացնում է երկու մեթոդով՝ տարբեր գերատեսչություններ տեղեկություն ստանալու հարցումներ ուղարկելու և պաշտոնական կայքերի անմիջական դիտարկման միջոցով:

### ■ Հարցումներ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարեկան շուրջ 500 տեղեկություն ստանալու հարցում է ուղարկում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ այսպիսով լինելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ամենակատիվ օգտագործող կազմակերպություններից մեկը:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության իրական վիճակը գնահատելու, պետական մարմիններին բաց և թափանցիկ աշխատելուն պարտավորեցնելու, ինչպես նաև քաղաքացիների համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, ինչպես նախորդ տարեին, 2012թ.-ին ևս շարունակել է տեղեկություններ ստանալու գրավոր հարցումներով դիմել տարբեր մարմինների:

2012թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարբեր մարմինների շուրջ 330 գրավոր հարցում է ուղարկել: Հարցումներ ուղարկվել են տարբեր մարմիններ՝ ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Կառավարություն և ՀՀ Նախագահի աշխատակազմ, Երևանի քաղաքապետարան, ՀՀ նախարարություններ, ՀՀ մարզպետարաններ, մարզային համայնքներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, ՀՀ Կառավարությանն առընթեր մարմիններ, պետական ոչ առևտրային կազմակերպություններ և այլն:

Հարկ է նշել, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուղարկած վերոնշյալ հարցումների մի մասն էլ ուղարկվել է ԻԱԿ դիմած քաղաքացիների խնդրանքով՝ նրանց համար տեղեկություն ստանալու նպատակով:

ԻԱԿ ուղարկած հարցումները ոչ միայն հնարավորություն են տալիս պետական մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկությունները, այլ նաև պատկերացում կազմել տվյալ մարմնում տեղեկատվության ազատության վիճակի վերաբերյալ: Այս հարցումներին տեղեկատվություն տնօրինող մարմինների կողմից ներկայացվող պատասխանների տրամադրման ժամկետների, պատասխան գրությունների ամբողջականության, հարցումների պատասխանը ստանալու գործընթացի վերլուծությունն էլ իր հերթին հնարավորություն է տալիս վերհանել տեղեկատվության ազատության ընդհանուր վիճակը, խնդիրներն ու առաջընթացները:

2012թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տարբեր մարմինների շուրջ 330 գրավոր հարցում է ուղարկել:

## ■ Պաշտոնական կայքերի վերլուծություն

2012թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը վերլուծել է մի շարք պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերի համապատասխանությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին՝ փորձելով պարզել, թե որքանով է տվյալ գերատեսչության կողմից տնօրինվող տեղեկատվությունը հրապարակվում այդ մարմնի ինտերնետային կայքում: Ինտերնետային կայքերը վերլուծելիս հաշվի էր առնվում արդյոք տվյալ մարմնի ինտերնետային կայքում առկա են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, արդյոք հրապարակված է տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու անձի կոնտակտային տվյալները, առկա են արդյոք պետական մարմնի ինտերնետային կայքում Տեղեկատվության ազատություն վերաբերյալ ենթաբաժին, տեղեկություն ստանալու օրինակելի ձև, ինչպես նաև տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցմամբ դիմելու հնարավորություն, արդյոք էլեկտրոնային տարբերակով տրամադրվում է տեղեկատվություն, թե՛ ոչ: Կայքերի վերլուծությունների արդյունքում բացահայտված թերությունները ներկայացվել են համապատասխան գերատեսչություններին՝ դրանք վերացնելու առաջարկով:

2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մասնավորապես վերլուծել է ՀՀ բոլոր նախարարությունների պաշտոնական ինտերնետային կայքերը: Վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ 18 նախարարություններից միայն ՀՀ ՏԿՆ-ի պաշտոնական կայքում է առկա տեղեկություն ստանալու օրինակելի ձևը, ինչը ՏԱ մասին ՀՀ օրենքի պահանջ է: ԻԱԿ-ը գրավոր դիմեց բոլոր նախարարություններին՝ առաջարկելով ներառել հարցման ձևն իրենց կայքերում՝ միաժամանակ պատրաստականություն հայտնելով տրամադրել համապատասխան խորհրդատվություն: Արդյունքում, այսօր արդեն նախարարություններն իրենց պաշտոնական կայքերում տեղադրել են տեղեկություն ստանալու օրինակելի ձևը և այժմ արդեն այն առկա է ՀՀ 18 նախարարություններից 12-ի կայքերում՝ բացառությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ սփյուռքի, ՀՀ տրանսպորտի և կապի և ՀՀ քաղաքաշինության նախարարությունների կայքերը: Նշենք սակայն, որ այս նախարարությունները նշել են, որ կամ կքննարկեն և կտեղադրեն հարցման օրինակելի ձևն իրենց կայքերում, կամ էլ հայտնել են, որ կայքերը գտնվում են մշակման փուլում (նախատեսվում են նոր կայքեր), և հարցման օրինակելի ձևը անպայմանորեն կներառվի նախարարության նոր մշակված կայքում և շուտով հասանելի կլինի: Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը տեղադրված է նաև ՀՀ Նախագահի և ՀՀ Կառավարության պաշտոնական ինտերնետային կայքերում:

## 7 Միջոցառումներ

### ■ Մամուլի ազատության օրվան նվիրված ֆոտոցուցահանդես

Արդեն երկրորդ անգամ Մամուլի ազատության համաշխարհային օրը՝ մայիսի 3-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ-ում Եվրամիության պատվիրակության, ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակի և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի հետ համատեղ կազմակերպեց ֆոտոցուցահանդես՝ «Մամուլի ազատություն, Տեղեկություն ստանալու իրավունք» խորագրով:

Ցուցահանդեսի նպատակն է անդրադառնալ տեղեկատվություն ստանալու իրավունքի խոչընդոտներին ու հնարավորություններին, և կառավարությանը, մամուլի ներկայացուցիչներին ու ընդհանուր հանրությանը հիշեցնել այս իրավունքին հասնելու գործում իրենց դերակատարման մասին: Ֆոտոցուցահանդեսին մասնակցող 70-ից ավելի լուսանկարներն ու ծաղրանկարները տպագրվել են նաև մամուլի ազատության համաշխարհային օրվան նվիրված հատուկ ֆոտոկատալոգում: Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ 2012թ. մայիսի 3-ին, որին ներկա էին ՀՀ-ում ԱՄՆ Դեսպան Ջոն Յեֆերնը, Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Յրիսթեան, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սոռոկինը, Հայաստանի լրագրողներ, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Ցուցահանդեսը տևել է մեկ շաբաթ, որի ավարտից հետո լուսանկարները հրապարակվեցին Մամուլի ազատության օրվան նվիրված հատուկ կատալոգում:

### ■ Աշխատանքային քննարկումներ

2012թ.-ի հոկտեմբերի 27-ին և 28-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ Տեղեկատվական վեճերի խորհուրդն անցկացրեց աշխատանքային քննարկում փաստաբանների և լրագրողների մասնակցությամբ:

Աշխատանքային քննարկումը կազմակերպվել էր ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ դատական գործերով Տեղեկատվական վեճերի խորհրդի (ՏՎԽ) փորձը: Նշենք, որ աշխատանքային քննարկման մասնակից փաստաբանների և լրագրողների մեծ մասը հայցվոր կամ պատասխանող կողմն է եղել վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ դատական գործերով: Ծավալված քննարկման արդյունքում մասնակիցները հանգեցին եզրակացության, որ ՋԼՄ-ն պետք է հնարավորինս իրականացնի մոդերացիա՝ իր մատուցած բովանդակությունում վիրավորանք և զրպարտություն թույլ չտալու համար:

ՏՎԽ-ի գործունեության զարգացման հեռանկարները քննարկելու նպատակով 2012թ.-ի նոյեմբերի 27-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ կազմակերպել էր աշխատանքային քննարկում Տեղեկատվական վեճերի խորհրդի անդամների և ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչների հետ: Քննարկման ընթացքում հարցեր բարձրացվեցին, թե արդյոք ավելի նպատակահարմար է ՏՎԽ-ի կարծիքները հրապարակել դատական գործի սկզբում, ընթացքում թե վճռի հրապարակումից հետո: ՀՀ դատական դեպարտամենտի աշխատանքային խմբի անդամներից ոմանք մտահոգություն հայտնեցին, որ ՏՎԽ-ն իր որոշումներով կարող է հասարակության մեջ դատական համակարգի նկատմամբ անվստահություն սերմանել, ինչը, սակայն, փարատվեց ՏՎԽ ադամների մեկամարտություններից հետո: Քննարկման ընթացքում առաջարկ հնչեց, որ կարելի է Տեղեկատվական վեճերի խորհրդին տալ համապատասխան կարգավիճակ, որն էլ կօգնի ՏՎԽ-ին հանդես գալու հաշտարարի միջնորդի դերում: Շուշան Դոյոդյանն էլ առաջարկեց, որ կարելի է ձևավորել մի նախադեպ, որ դատարան-

ները դիմեն ՏՎԽ-ին՝ զրպարտության և վիրավորանքի գործերով մասնագիտական կարծիք ստանալու համար: Մանանա Ասլամազյանն էլ հավելեց, որ ՏՎԽ-ն կարող է կարծիք տալ լեզվաբանական, լրագրողական էթիկայի տեսանկյունից:

### ■ ԻԱԿ-ի աջակցությամբ ընդունվել են քրեական գործերով տեղեկություն տրամադրելու կանոնները

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և ՀՀ գլխավոր դատախազությունը համատեղ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Տեղեկատվության մատչելիությունը համայնքային մասնակցության համար» ծրագրի շրջանակում մշակել են քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կանոններ, որոնք հաստատվել են 2012թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանի հրամանով: Կանոններն ուղղված են քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովմանը, այդ գործընթացում ԶԼՄ-ի հետ համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

Քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կանոնները մշակելու ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը: Այդ նպատակով ՀՀ գլխավոր դատախազության և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի փորձագետներն աշխատանքային այցով եղել են Ստրասբուրգում ոլորտի մասնագետների հետ հանդիպելու և քրեական գործերով տեղեկատվության տրամադրման և սահմանափակումների առանձնահատկությունները քննարկելու նպատակով: Նշենք նաև, որ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ այս կանոնները ուսումնասիրվել, փորձաքննության են ենթարկվել նաև միջազգային փորձագետների կողմից, որոնց ներկայացրած առաջարկներն ու դիտարկումները հաշվի են առնվել փաստաթղթի լրամշակման փուլում: Փաստաթուղթը նաև դրվել է հանրային քննարկման:

### ■ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն

Ապրիլի 17-ից 18-ը Բրազիլիայի մայրաքաղաքում կայացավ Բաց կառավարման գործընկերության առաջին տարեկան հավաքը, որին մասնակցեց նաև ՀՀ պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էր նաև Ինֆորմացիայի ազատության կենտրոնի փորձագետ Լիանա Դոյդոյանը, ով միջազգային հանրությանը ներկայացրեց ՀՀ գործողությունների պլանի մշակման փուլում քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացի մանրամասները:

Բաց կառավարման գործընկերությունը ստեղծվել է 2011-ին սեպտեմբերին՝ 8 երկրների նախաձեռնությամբ (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավորություն, ԱՄՆ): Այս նախաձեռնությանն այսօր արդեն միացել է ավելի քան 60 երկիր: Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է նախաձեռնությանը 2011-ի նոյեմբերին: ՀՀ վարչապետի՝ 27-ը հունվարի, 2012թ. 50-Ա որոշմամբ ստեղծվեց աշխատանքային խումբ, որը մշակեց Հայաստանի Գործողությունների պլանը: Աշխատանքային խմբում ներգրավված էին կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Աշխատանքային խմբում ԻԱԿ-ը ներկայացնում էր Լիանա Դոյդոյանը: Ինֆորմացիայի ազատության կենտրոնն առաջարկել էր բաց կառավարմանն ուղղված երկամյա ծրագրում ընդգրկել ավելի քան 10 կետ, որոնք հիմնականում ուղղված են պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության և դրանցում հրապարակվող տեղեկատվության, տեղեկատվության ազատության ոլորտում պաշտոնյաների գիտելիքի և հմտությունների բարելավմանը, պաշտոնյաների գույքի և եկամտի հայտարարագրերի հրապարակայնության ապահովմանը և այլն: Այս բոլոր առաջարկները ներգրավվել են փաստաթղթում՝ որպես ՀՀ կառավարության հանձնառություններ 2012-2014 թվականների համար:



Հայաստանի գործողությունների ծրագրի հիմնական դրույթները նպատակաուղղված են Հայաստանում հանրային կառավարման համակարգի արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության բարելավմանը. հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում, էլեկտրոնային կառավարման զարգացում, զնունների գործընթացի կատարելագործում և թափանցիկության ապահովում, տեղեկատվության ազատության և մատչելիության բարելավում, պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակայնացում, կոռուպցիայի դեմ պայքար և այլն:

2012 թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարությունում տեղի ունեցավ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունում Հայաստանի Հանրապետության մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի առաջին նիստը:

Աշխատանքային խումբը ձևավորվել է համաձայն ՀՀ վարչապետի՝ 2012 թվականի սեպտեմբերի 29-ի N 931-Ա որոշմամբ: Աշխատանքային խմբում ներգրավված է նաև ԻԱԿ փորձագետ Լիանա Դոյդոյանը: Աշխատանքային խմբում քննարկվեցին հայաստանյան գործողությունների ծրագրով ներկայացված հանձնառությունների իրականացմանն ուղղված աշխատանքների համակարգման քայլերը. մասնավորապես, անդամներին առաջարկվեց կոնկրետ հանձնառությունների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, որոնք կքննարկվեն հաջորդ նիստի ժամանակ:

■ **Սև և Սպիտակ ցուցակներ**

2012թ. դեկտեմբերի 26-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը հրապարակեց 2012թ. ընթացքում մարդկանց տեղեկատվություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաների Սև ցուցակը, ինչպես նաև ԻԱԿ եռամսյակային Սև ցուցակներում հայտնվելուց հետո տեղեկատվության ազատության ոլորտում իրենց աշխատանքը վերանայած պաշտոնյաների Սպիտակ ցուցակը:

Հիշեցնենք, որ 2011թ.-ից Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր տարեկան Սև ցուցակին զուգահեռ հրապարակում է նաև տարեկան Սպիտակ ցուցակ: Բոլոր այն գերատեսչությունները, որոնք եռամսյակային Սև ցուցակներում հայտնվելուց հետո վերանայում են տեղեկատվության ազատության ոլորտում իրենց գործունեությունը և բարեփոխումներ իրականացնում տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով, այլևս չեն ընդգրկվում տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների տարեկան ամփոփ Սև ցուցակում: Այդ գերատեսչություններն ու նրանց ղեկավարներն ընդգրկվում են ԻԱԿ-ի ամենամյա Սպիտակ ցուցակում:

2012թ.-ին ԻԱԿ-ի Սև ցուցակից Սպիտակ ցուցակ է տեղափոխվել 2 տեղեկություն տնօրինող մարմնի ղեկավար (Սև և Սպիտակ ցուցակները տես՝ <http://foi.am/hy/years/>):

www.foi.am

www.givemeinfo.am

**«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ**

Հասցե՝	ՀՀ, ք. Երեւան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ./ֆաքս՝	560360
Էլ. փոստ՝	foi@foi.am
Ինտ. կայք՝	www.foi.am